

Երվանդ Պետրոսյան

# Այբբենարան



# Ա ա

(այբ)



Արծիվ

Ամպ



Արագիլ

Ա ասելիս նախ և առաջ
Արևն է ինձ աչքով անում.
Մայրս է ասես՝ ձեռքը պարզած,
Ինձ թռցնում, երկինք հանում:

Աղվես



Արև



Արևը և՛ իմն է, և՛ քոնը
Եվ բոլորինը՝
Առյուծ թե բույս...
Արևը աշխարհի մայրն է.
Առանց նրա՝
Չկա կյանք,
Չկա լույս ու հույս:



Առյուծ



Արջ

Ժայռ

Ժայռերը չեն ժպտում:
Դրա համար են այդպես խոժոռ:
Եթե ժպտային՝ կարտասվեին
Բարի արցունքով խոշոր-խոշոր:





Ժայռապատկեր



# Ց ց (gn)

Ցանկապատ

Ցնցուղի ջուրն այնպես զգույշ է ցողում,
Ասես երկնքից իջնում է ցող,
Այդպես էլ պետք է. նորածիլ բույսեր են
Ու ծաղիկներ են՝ նոր աչք բացող։

# Օ օ

(o)

Օղակ






Օրորոցն է մարդկությանը
Դեռ այն օրից օրորել,
Երբ Տեր-Աստված բարեհաճեց
Այդ օր մարդուն արարել:

# Այբբենարան



Լ

Հայոց այբուբենի տառերը հնարավոր է սովորել շատ արագ՝ մեզ շրջապատող իրերի, առարկաների, բնության երևույթների օգնությամբ։ Այս գրքի օգնությամբ երեխան կբացահայտի այբուբենի տառերի ու շրջապատող աշխարհի զարմանահրաշ ներդաշնակությունը։ Նա կիմանա, որ այբուբենի բոլոր տառերով սկսվող երևույթներ կան աշխարհում, բայց և կպարզի, որ, օրինակ, Ա տառով ավելի շատ բառեր են սկսվում, քան՝ Ղ տառով։ Կկարողանա յուրօրինակ խաղի մեջ մտնել՝ իրար կողք դնելով նույն տառով սկսվող բառերը։ Վառ և գեղեցիկ նկարները կօգնեն փոքրիկին ոչ միայն հիշել տառերը, այլև՝ դրանցով բառեր կազմել։ Գիրքը ոչ միայն սովորեցնում է դիտել, հետևել, համեմատել, հիշել, այն նաև հարստացնում է բառապաշարը և նպաստում խոսքի զարգացմանը։



Ա



# Ե ե

(եչ)

Երիցուկ





Երկինք